# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավետ, (0235)63355, (0235)63311, m8gavet0@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

25 հունվարի 2017թվականի N 04

## ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 2-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<< Տեղական ինքնակառավարման մասին >>Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով

Հաստատել Մրգավետ համայնքի թիվ 2-րդ նիստի հետևյալ օրակարգը

1.Մրգավետ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նոր կազմը հաստատելու մասին

2. Հողի հարկի արտոնություն տալու մասին

3. Համայնքի 2017թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին

4.Մրգավետ համայնքի քաղաքաշինության կանոնադրությունը հաստատելու մասին

5. Մրգավետ համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՐՇԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
4. ԲԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ԴԱԽՉՅԱՆ ՑՈԼԱԿ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավետ, (0235)63355, (0235)63311, m8gavet0@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունվարի 2017թվականի N 05

## ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության <<Ընտանեկան օրենսգրքի>> 109 հոդվածով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով ավագանին որոշում է՝

1.Հաստատել Մրգավետ համայնքի խնամակալության և հոգաբարձության նոր հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հրայր Խուդոյան-դպրոցի փոխտնօրեն-հանձնաժողովի նախագահ

Շուշանիկ Ավագյան-դպրոցի հոգեբան

Լուսինե Արշակյան-ավագանու անդամ

Ծովիկ Պողոսյան-բուժ. ամբուլատորիայի գլխ. բժիշկ

Արայիկ Գրիգորյան-աշխատակազմի առաջատար մասնագետ

2.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 30.09.2014թվականի<<Մրգավետ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին>>թիվ 17 որոշումը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՐՇԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
4. ԲԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ԴԱԽՉՅԱՆ ՏՈՒԱԿ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավետ, (0235)63355, (0235)63311, m8gavet0@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

25 հունվարի 2017թվականի N 06

## ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով ավագանին որոշում է՝

Հարգել Մրգավետ համայնքի սեփականատեր Կարեն Մինասյանի դիմումը և նրան ազատել հողի հարկից 2017 թվականից մինչև 2021 թվականը ներառյալ, քանի որ նա 0,235հա վարելահողի վրա հիմնել է կորիզավոր այգի /ծիրան/, 0,19հա վարելահողի վրա՝ պտղատու այգի/դեղձենի/, 0,41հա վարելահողի վրա՝ պտղատու այգի /կեռաս/:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԱՌԵԱԿՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՌԵԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
4. ԲԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ԴԱՆՈՅԱՆ ՅՈՒԱԿ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավետ, (0235)63355, (0235)63311, m8gavet0@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունվարի 2017թվականի N 07-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի դրույթներով ավագանին որոշում է

1.Հաստատել Մրգավետ համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի

2.Ուժը կորցրած ճանաչել Մրգավետ համայնքի ավագանու 30.11.2016թվականի<<Մրգավետ համայնքի 2017թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին>>թիվ 27-Ն որոշումը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՐՇԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
4. ԲԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ՂԱՍԶՅԱՆ ՑՈԼԱԿ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
Մրգավետ համայնքի ավագանու
2017 թվականի հունվարի 25-ի
թիվ 07-Ն որոշման

# ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

1.հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ,

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100 000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքերից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամշենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվում են 0.5 գործակցի կիրառմամբ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8.330 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.500 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13.200 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21.000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 41.000 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 95.000 դրամ:
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8.330 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.500 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13.200 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21.000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 41.000դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 95.000դրամ:
5. Համայնքի տարածքում՝
ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.
բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է 200 000 դրամ.
գ) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է 60 000 դրամ.
գա) համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
հիմնական շինությունների ներսում՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝5000 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝10.000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 13.000դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16.000դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 22.000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 31.000դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝15.000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25.000 դրամ:

6. Համայնքի վարչական տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը օրացույցային տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000դրամ:

4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվում են 0.3 գործակցի կիրառմամբ:

7. ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մ ե տր ի հ ամ ար ՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝2000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500դրամ.

ե) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

7.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

7.2. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

8. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000 դրամ:

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Բնակչի պահանջով սեփականաշնորհված և տնամերձ հողերը չափելու համար,որպես վարձավճարի չափ սահմանել՝ 1000 դրամ

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ 500 դրամ:

Աղբահանության տեղական վճար՝ 0 դրամ

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Կարապետյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավետ, (0235)63355, (0235)63311, m8gavet0@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունվարի 2017թվականի N 08-Ն

## ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջներով ավագանին որոշում է՝

Հաստատել Մրգավետ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը համաձայն հավելվածի

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՐՇԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
4. ՔԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ՂԱՆՋՅԱՆ ՑՈԼԱԿ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Մրգավետ համայնքի ավագանու
2017 թվականի հունվարի 25-ի թիվ
08-Ն որոշման

# ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ

Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, որպես կանոն, մշակվում և հաստատվում է գոտևորման նախագծի կազմում՝ հավելվածի տեսքով:

1.2. Համայնքի ավագանու որոշմամբ քաղաքաշինական կանոնադրությունը կարող է մշակվել նաև մինչև գլխավոր հատակագծի և (կամ) գոտևորման նախագծի մշակումը՝ որպես առանձին փաստաթուղթ: Այս դեպքում կանոնադրությունը կցվում է նախագծային առաջադրանքին և պարտադիր հաշվի է առնվում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման ընթացքում:

1.3. Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանքի ձևի «Լրացուցիչ պայմաններ» բաժնում:

## II. ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ
(Ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)

2.1. Համայնքի տարածքում գտնվող կարևոր շենքերի և շինությունների ճարտարապետական ոճի, կրկնվող և հաճախ կիրառվող տարրերի, ճակատների ձևավորման առանձնահատկությունների, օգտագործված շինանյութի և կառուցման եղանակի նկարագրությունը:

2.2. Նկարագրությունը հիմնավորվում է համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

## III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

3.1. Համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների նկարագրությունը, դրանց ներկայիս վիճակը, վերականգնման ու պահպանման հետ կապված խնդիրները:

3.2. Տվյալները հիմնավորվում են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներով, համապատասխան լուսանկարներով:

## IV. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Նկարագրվում են համայնքի տարածքում գտնվող համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող շենքերը և շինությունները, բերվում են դրանց հետ առնչվող պատմությունները, ներկայացվում են շենքերի և շինությունների ներկա վիճակը, վերականգնման պահպանման հետ կապված խնդիրները:

4.2. Տվյալները հիմնավորվում են համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

## V. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍՎՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

5.1. Թվարկվում են այն ճարտարապետական ոճերը, հնարքները, դեկորատիվ տարրեր ճակատների ձևավորման առանձնահատկությունները, դռների, պատուհանների

համաչափությունները, շինարարական նյութերը և կառուցման եղանակը, որոնք պահպանվելու են համայնքի տարածքում և խրախուսվելու են նոր շենքերի կառուցման ժամանակ:

1. Շենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին, ինչպես նաև դրանց առանձին մասերին ներկայացվող պահանջները

ա. շենքի մասշտաբը, ճակատային լուծումներն ու դրանք շեշտադրող տարրերը (զարդաքանդակները, շքամուտքը (պորտալը), որմնախորշերը, շվաքարանները, քիվերը, կամարները և այլն), ըստ ճարտարապետակահատակագծային առաջադրանքի ,

բ. շենքի ճակատային մասի արտաքին բացվածքների (դռներ, պատուհաններ, ցուցափեղկեր) ձևավորումը,
ըստ ճարտարապետակահատակագծային առաջադրանքի ,

գ. շենքի տանիքներն ու շենքերի հորիզոնական հարթությունները («հինգերորդ ճակատ»), ինչպես նաև ճակտոնները (ֆրոնտոնները), մանսարդները, ձեղնանցքները, եզրապատերը (պարապետները) և այլն,
ըստ ճարտարապետակահատակագծային առաջադրանքի ,

դ. շվաքարանները (տենտերը, մարկիզաները),
ըստ ճարտարապետակահատակագծային առաջադրանքի ,

ե. շենքի ճակատների և տանիքի հարդարման նյութերն ու երանգավորումը, արտաքին լուսավորությունը.

ըստ ճարտարապետակահատակագծային առաջադրանքի ,

2. Փողոցների, անցումների, հետիոտն ճանապարհների ու հեծանվաուղիների (ճանապարհային ցանց), հրապարակների, ներքին բակերի, շքաբակերի (կուրդոնյերների) և հարթակների կառուցվածքին ու ձևավորմանը, ավտոկայանատեղիների կազմակերպմանը ներկայացվող պահանջները

ա. ճանապարհային ծածկույթը (նյութը, դեկորատիվ տարրերը և գունային լուծումները),
ըստ ճարտարապետակահատակագծային առաջադրանքի և կազմավորված քաղաքաշինական միջավայրի պայմանների,

բ. համայնքն սպասարկող տրանսպորտի համար նախատեսված կանգառների ձևավորումը,
ըստ ճարտարապետակահատակագծային առաջադրանքի և կազմավորված քաղաքաշինական միջավայրի պայմանների,

գ. հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի տեղաշարժման համար անհրաժեշտ կահավորանքը (թեքահարթակներն ու հատուկ հարմարանքները՝ լուսային, ձայնային և այլ նախազգուշացման միջոցներով),
ըստ ճարտարապետակահատակագծային առաջադրանքի և կազմավորված քաղաքաշինական միջավայրի պայմանների,

դ. ֆունկցիոնալ ձևավորումը, կանաչապատումը և կահավորանքը (փոքր ճարտարապետական ձևեր կամ դեկորատիվ արվեստի նմուշներ, զրուցարաններ, շվաքարաններ, նստարաններ, շատրվաններ, դեկորատիվ ջրավազաններ, կանաչ տնկարկներ, այդ թվում՝ ուղղահայաց կանաչապատում և այլն),

ըստ ճարտարապետակահատակագծային առաջադրանքի և կազմավորված քաղաքաշինական միջավայրի պայմանների,

ե. ճանապարհային ցանցին հարող պարիսպների, ցանկապատերի (այդ թվում՝ դալար ցանկապատերի) կառուցվածքին, նյութին ու ձևավորմանը ներկայացվող պահանջները.
ըստ ճարտարապետակահատակագծային առաջադրանքի և կազմավորված քաղաքաշինական միջավայրի պայմանների,

3. Լանդշաֆտին, այգեպուրակային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջները

ա. ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների և հետիոտն շարժման ակտիվ գոտիների կանաչապատումն ու բարեկարգումը (փոքր ճարտարապետական ձևեր, ջրային մակերեսներ, շատրվաններ, նստարաններ, տաղավարներ, զրուցարաններ և բարեկարգման այլ տարրեր),
ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի և կազմավորված քաղաքաշինական միջավայրի պայմանների,

բ. այգեպուրակային շինարարության կազմը (հենապատեր, ծառուղիներ, հարթակներ, աստիճաններ, ինչպես նաև ծառեր, թփեր, սիզամարգեր, ծաղկաթմբեր և գալարվող բույսեր, դեկորատիվ բուսական ծածկույթ, բազմամյա և միամյա բույսերի տեսակներ, կանաչապատման և բարեկարգման այլ միջոցներ),
ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի և կազմավորված քաղաքաշինական միջավայրի պայմանների,

գ. անհրաժեշտության դեպքում՝ քամու դեմ պաշտպանական գոտու ստեղծման միջոցառումները (ծառատունկ, կանաչ ծածկույթների իրականացում տեղական ավանդական տնկանյութերի տեսակներից՝ տարբեր բարձրության բույսերի զուգակցմամբ),
ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի և կազմավորված քաղաքաշինական միջավայրի պայմանների :

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավետ, (0235)63355, (0235)63311, m8gavet0@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

25 հունվարի 2017թվականի N 09-Ն

## ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և 69-րդ հոդվածի պահանջներով ավագանին որոշում է՝

Հաստատել Մրգավետ համայնքի 2016թվականի բյուջեի տարեկան կատարողականը համաձայն հավելվածի

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՐՇԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
4. ԲԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ԴԱԽՉՅԱՆ ՑՈՂԱԿ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
Մրգավետ համայնքի ավագանու
2017թվականի հունվարի 25-ի
թիվ 09-Ն որոշման

**ՀՀ Արարատի մարզի Մրգավետ համայնքի 2016թ.**

բյուջեի եկամուտներ
կատարողական

| N | Հ/Հ | Եկամուտների անվանումը | 2016թ. պլան | կատարողական փաստացի | % |
|---|---|---|---|---|---|
| | | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | 47609.9 | 47701.288 | 100 |
| 1 | | Հարկեր և տուրքեր , այդ թվում | 9273.0 | 936.388 | 101 |
| | 1/1 | Գույքային հարկեր անշարժ գույքից, այդ թվում | 4983.0 | 4994.988 | 100 |
| | | Գույքահարկ շենքի և շինությունների, որից | 183.0 | 184.988 | 101 |
| | | ֆիզիկական անձանցից | 182.0 | 184.0 | 100 |
| | | Իրավաբանական անձանցից | 1.0 | 0.988 | 100 |
| | | Հողի հարկ, այդ թվում՝ | 4800.0 | 4810.0 | 100 |
| | | ֆիզիկական անձանցից | 4800.0 | 4810.0 | 100 |
| | | Իրավաբանական անձանցից | | | |
| | 1/2 | Գույքահարկ փոխադրամիջոցներից | 4000.0 | 4009.9 | 100 |
| | 1/3 | Ապրանքների օգտագործման և իրացման թույլտվության համար այդ թվում | 290.0 | 357.5 | 123 |
| | | Տեղական տուրքեր, որից | *290.0* | *357.5* | *123* |
| | | Շինությունների շինարարության թույլտվության համար, որից | 15.0 | 82.5 | 550 |
| | | Հիմնական շինությունների համար | | | |
| | | Ոչ հիմնական շինությունների համար | | | |
| | | Շենքերի և շինությունների վերակառուցման թույլտվություն | | | |
| | | Շինությունների քանդման թույլտվություն | 5.0 | 5.0 | 100 |
| | | Ծխախոտի վաճառքի թույլտվություն | 135.0 | 135.0 | 100 |
| | | Խմիչքների իրացման համար | 135.0 | 135.0 | 100 |
| | | Բացօթյա վաճառքի համար | | | |
| | | Վառելիքի վաճառքի համար | | | |
| | | Ժամը 24-ից հետո աշխատելու համար | | | |
| | | Արտաքին գովազդի համար | | | |
| | | Տաքսի ծառայության թույլտվության համար | | | |
| | | Այլ տեղական տուրք | | | |
| | 1/4 | Ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման այլ պարտադիր վճարներ, այդ թվում՝ | | | |
| | | Պետական տուրքեր,այդ թվում՝ | | | |
| | | Զագս | | | |
| | | Նոտար | | | |
| | 1/5 | Այլ հարկային եկամուտներ / տույժեր և տուգանքներ/ | | | |
| 2 | | Պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում՝ | 38168.9 | 38168.9 | 100 |
| | 2/5 | Ընթացիկ ներքին դրամաշնորհներ /դոտացիա/ | 37792.6 | 37792.6 | 100 |
| | | Այլ դոտացիա | 1.3 | 1.3 | 100 |
| | | Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին | 375.0 | 375.0 | 100 |
| 3 | | Այլ եկամուտներ, այդ թվում | 168.0 | 170.0 | 100 |
| | 3/3 | Գույքի վարձակալությունից մուտքեր, որից՝ | 168.0 | 168.0 | 100 |
| | | Հողերի վարձակալություն | 168.0 | 168.0 | 100 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Այլ գույքի վարձակալություն | | | |
| 3/4 | Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքներ մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում | | | |
| | Պատվիրակված լիազորություններ | | | |
| 3/5 | Վարչական գանձումներ, այդ թվում | - | 2.0 | |
| | Տեղական վճարներ | | | |
| | Շենքերի օրինականացման վճարներ | | | |
| | Ծնողական գումարներ | | | |
| 3/6 | Մուտքեր տույժերից տուգանքներից, այդ թվում | | | |
| | Վարչական իրավախախտումների համար | | | |
| 4. | Վարչական բյուջեի մնացորդ որն ուղղվում է նախորդ տարիների պարտքերի մարմանը | | | |
| | *Վարչական Բյուջեի Եկամուտները Ընդամենը* | 3498.752 | 3608.405 | 103 |
| | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | | | |
| 1. | Համայնքային սեփականություն համարվող գույքի օտարումից մուտքեր | 2500.0 | 2864.653 | 114 |
| 2. | Հողի օտարումից մուտքեր | | | |
| 3. | Վարկերի փոխառությունների ձևով ներգրավված միջոցներ | 255.0 | - | |
| 4. | Հատկացումներ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից | 735.035 | 735.035 | 100 |
| 5. | Տարեսկզբի ազատ մնացորդ-վարչական բյուջե | 8.717 | 8.717 | 100 |
| 6. | Տարեսկզբի ազատ մնացորդ –ֆոնդային բյուջե | 50853.652 | 51309.693 | |
| | Եկամուտներ *Ընդամենը* | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԳԼԽ . ՄԱՍՆԱԳԵՏ՝ Ա. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ

2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՊԼԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

| Հոդվածների անվանումը | կառ.մարմնի պահպ 01-01-01-51 | | | նախադպ.ուսուցում 09-01-01-51 | | | հանրակրթական ուս. 09-01-02-51 | | | վարչ.օբյ.կապ.վեր.01-01-01-52 | | | Թատերական ներկ.08-02-05-52 | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | պլան | փաստաց | % | պլան | փաստաց | % | պլան | փաստաց | % | պլան | փաստաց | % | պլան | փաստացի | % |
| 4111 Աշխատավարձ | 12702.0 | 12688.71 | 99.9 | | | | | | | | | | | | |
| 4112 Պարգևատրում | 941.0 | 940.5 | 100 | | | | | | | | | | | | |
| 4212 Էներգետիկ ծառ. | 600.0 | 600.0 | 100 | | | | | | | | | | | | |
| 4213 Կոմունալ ծառ | | | | | | | | | | | | | | | |
| 4214 կապի ծառ. | 500.0 | 433.6 | 87 | | | | | | | | | | | | |
| 4221 գործուղում | | | | | | | | | | | | | | | |
| 4232 համակարգչ.ծ | 220.0 | 217.0 | 99 | | | | | | | | | | | | |
| 4234 տեղ..ծա | 65.0 | 65.0 | 100 | | | | | | | | | | | | |

| Հոդվածների անվանումը | մշակույթ 08-02-04-51 | | | սանիտ. մաքր. 05-01-01-51 | | | մայր. և փող. հին. 04-05-01-58 | | | արտ. լույս. ցանցի շահ.և պահպ. 06-04-01-52 | | | սոց. անապ անձ.աջակց. 10-07-01-54 | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | պլան | փաստաց | % | պլան | փաստաց | % | պլան | փաստաց | % | պլան | փաստաց | % | պլան | փաստաց | % |
| 4111 Աշխատավարձ | 3940.0 | 3889.018 | 93 | | | | | | | | | | | | |
| 4112 Պարգևատրում | | | | | | | | | | | | | | | |
| 4212 Էներգետիկ ծառ. | | | | | | | | | | 2100.0 | 2100.0 | 100 | | | |
| 4213 Կոմունալ ծառ | | | | 990.0 | 990.0 | 100 | | | | | | | | | |
| 4214 կապի ծառ. | | | | | | | | | | | | | | | |
| 4221 գործուղում | | | | | | | | | | | | | | | |
| 4232 համակարգչ.ծ | | | | | | | | | | | | | | | |
| 4234 տեղ..ծա | | | | | | | | | | | | | | | |

| Հոդվածների անվանումը | հաս. կազ. աջակց. 10-07-01-55 | | | կենդ.և բն.պահպ 05-04-01-55 | | | Ֆոնտաջային.գազաֆիկացում 04.-03-02-55 | | | Նախագծային գումար 04-05-01-59 | | | ընդամենը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | պլան | փաստաց | % | պլան | փաստաց | % | պլան | փաստաց | % | պլան | փաստաց | % | պլան | փաստաց | % |
| 4111 Աշխատավարձ | | | | | | | | | | | | | 16642.0 | 16577.73 | 99 |
| 4112 Պարգևատրում | | | | | | | | | | | | | 941.0 | 940.5 | -100 |
| 4212 Էներգետիկ ծառ. | | | | | | | | | | | | | 2700.0 | 2700.0 | 100 |
| 4213 Կոմունալ ծառ | | | | | | | | | | | | | 990.0 | 990.0 | 100 |
| 4214 կապի ծառ. | | | | | | | | | | | | | 500.0 | 433.6 | 87 |
| 4221 գործուղում | | | | | | | | | | | | | | | |
| 4232 համակարգչ.ծ | | | | | | | | | | | | | 220.0 | 217.0 | 99 |
| 4234 տեղ..ծա | | | | | | | | | | | | | 65.0 | 65.0 | 100 |

| 4215 Կապի ծախս. | 4823 Պարտադիր վճ. | 4269 հատուկ նպ.նյ. նյութ | 4267 սն. և տնտ. նյ | 4264 տրանսպ. նյութ | 4261 գրասենյակ | 4252 մեք.և սարք. ընթ. | 4251 շենք.և շին. նորոգ. | 4241 մասնագ. ծառ. | 4239 ընդհ. բն. ծառ. | 4235 կառ.ծ ախս. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 33.0 | 14.0 | 50.0 | 50.0 | 600.0 | 354.0 | 243.0 | | 50.0 | | |
| 33.0 | 9350.0 | 49.0 | 50.0 | 600.0 | 354.0 | 243.0 | | 50.0 | | |
| 100 | 67 | 99 | 100 | 100 | 100 | 100 | | 100 | | |
| | | | | | | | | | 17350.0 | |
| | | | | | | | | | 16660.0 | |
| | | | | | | | | | 96 | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | 80.0 | |
| | | | | | | | | | - | |
| | | | | | | | | | -- | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | 3000.0 | | | |
| | | | | | | | 2996.154 | | | |
| | | | | | | | 99 | | | |
| | | | | | | | 200.0 | | | |
| | | | | | | | 200.0 | | | |
| | | | | | | | 100 | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | 150.0 | |
| | | | | | | | | | 150.0 | |
| | | | | | | | | | 100 | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| 33.0 | 14.0 | 50.0 | 50.0 | 600.0 | 354.0 | 243.0 | 3200.0 | 50.0 | 17580.0 | |
| 33.0 | 9350.0 | 49.0 | 50.0 | 600.0 | 354.0 | 243.0 | 3196.154 | 50.0 | 16810.0 | |
| 100 | 67 | 99 | 100 | 100 | 100 | 100 | 99 | 100 | 95 | |

| Ընդամ ծախս | 5122 վարչ. սարք. ու. | 5121 տր. սարք | 5113 շենք. շին. նո | 5134ն նախ. ծե տ. ծախս. | 4891 Պահուստ. ֆոնդ | 48190 այլ չախ. ծախս | 4729 այլ նպ | 4637 ընթ. դր. տրանսֆ. | 4726 հոդ. ն. պաս |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18055.752 | 1533.752 | 100.0 | | | | | | | |
| 16973.168 | 540.0 | 100.0 | | | | | | | |
| 94 | 35 | 100 | | | | | | | |
| 17350.0 | | | | | | | | | |
| 16660.0 | | | | | | | | | |
| 96 | | | | | | | | | |
| 200.0 | | | | | | | | 200.0 | |
| 200.0 | | | | | | | | 200.0 | |
| 100 | | | | | | | | 100 | |
| 1500.0 | | | 1500.0 | 50.0 | | | | | |
| 965.080 | | | 935.080 | 30.0 | | | | | |
| 62 | | | 62 | 60 | | | | | |
| 80.0 | | | | | | | | | |
| - | | | | | | | | | |
| .. | | | | | | | | | |
| 3940.0 | | | | | | | | | |
| 3889.018 | | | | | | | | | |
| 93 | | | | | | | | | |
| 990.0 | | | | | | | | | |
| 990.0 | | | | | | | | | |
| 100 | | | | | | | | | |
| 3000.0 | | | | | | | | | |
| 2996.154 | | | | | | | | | |
| 99 | | | | | | | | | |
| 2300.0 | | | | | | | | | |
| 2300.0 | | | | | | | | | |
| 100 | | | | | | | | | |
| 2672.9 | | | | | | | 2572. | | 100.0 |
| 2364.5 | | | | | | | 2264. | | 100.0 |
| 88 | | | | | | | 88 | | 100 |
| 250.0 | | | | | | 250.0 | | | |
| 150.0 | | | | | | 150. | | | |
| 60 | | | | | | 60 | | | |
| 150.0 | | | | | | | | | |
| 150.0 | | | | | | | | | |
| 100 | | | | | | | | | |
| 255.0 | | | | 255.0 | | | | | |
| 240.0 | | | | 240.0 | | | | | |
| 94 | | | | 94 | | | | | |
| 60.0 | | | | 60.0 | | | | | |
| 60.0 | | | | 60.0 | | | | | |
| 100 | | | | 100 | | | | | |
| 50853.652 | 1533.752 | 100.0 | 1500.0 | 365.0 | | 250.0 | 2572. | 200.0 | 100.0 |
| 47937.920 | 540.0 | 100.0 | 935.080 | 330.0 | | 150.0 | 2264. | 200.0 | 100.0 |
| 94 | 35 | 100 | 62 | 91 | | 60 | 88 | 100 | 100 |

Համայնքի ղեկավար L. Աբրահամյան

Գլխավոր մասնագետ՝ Ա. Մնացյան

"04200624"